ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող
ԼԻԱՆՆԱ ԱՋԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԴԵՐԸ ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գիտատեխնիկական առաջընթացի դերն ագրարային ոլորտում առանձնապես մեծացավ այն բանից հետո, երբ 1991թ. սկսված բարեփոխումների հետևանքով խոշոր ապրանքային արտադրությունը տրոհվեց ու վերածվեց մանր գյուղացիական բնամթերային տնտեսությունների: Հողային ֆոնդի այսպիսի աննախադեպ փոշիացումը հանգեցրեց մեքենայացման աշխատանքների շեշտակի կրճատմանը, իսկ շատ գործընթացներում դրա իսպառ վերացմանը: Գյուղատնտեսական շրջանառությունից աստիճանաբար սկսեցին դուրս մնալ վարելահողերի և նախկինում օգտագործվող այլ հողահանդակների զգալի տարածություններ: Գրեթե բոլոր ուղղություններով իջավ գյուղատնտեսական արտադրության վարման ագրո և զոոտեխնիկական մակարդակը: Լիովին կազմալուծվեցին բոլոր կոլտնտեսություններում և սովխոզներում երբեմնի գրեթե լրիվ իրացված խոտաղաշտային ցանքաշրջանառությունները, հացահատիկի, կարտոֆիլի, բանջարային և այլ մշակաբույսերի սերմնաբուծության համակարգը: Մշակությունից գրեթե դուրս մնացին այնպիսի կարևոր մշակաբույսեր, ինչպիսիք են հատիկաընդեղենները (ոսպ, ոլոռ), հաճարը, ծխախոտը, ոչնչացվեցին հանրապետության խոշորագույն բանջարաբուծական ջերմատնային Հրազդանի, Արամուսի, Աբովյանի տնտեսությունները, վատ մշակվեցին հնդավոր պտղատեսակների մեծ տարածություններ զբաղեցնող այգիները:

Նույնանման վիճակում գտնվեցին նաև անասնաբուծության ճյուղերը: Լուծարվեցին անասնաբուծական խոշոր համալիրները՝ Զովունու տավարի մատղաշի բտման, Ջրառատի կաթնային համալիրները, որոշ թռչնաբուծական ֆաբրիկաները և այլն: Գրեթե ոչնչացվեցին տավարի և ոչխարի ցեղերի բարելավման գենոֆոնդը, ընթացավ անասնագլխաքանակի այլասերման ակտիվ գործընթացը: Խեղաթյուրվեց կերային բազան, գրեթե վերացան հյութալի կերերը, ավերակների վերածվեցին սիլոսի և սենաժի կառույցները, կտրուկ պակասեց համակցված կերերի օգտագործումը: Ներկայումս անասնաբուծության կերային բազան կազմում են հիմնականում արոտը, խոտը և ծղոտը:

Խիստ ցածր մակարդակի վրա են գտնվում բույսերի պաշտպանության և անասնաբուծության գործերը:

Այս իրավիճակը առա՛ջ է քաշում ինչպես ամբողջ հանրապետության, այդ թվում բոլոր մարզերի ագրարային ոլորտի առանձին ճյուղերի վերականգնման, կայունացման և հետագա զարգացման լուրջ ու ծանր խնդիրները, որոնց լուծումը պահանջում է կազմակերպական, աշխատանքային և նյութական ռեսուրսների լրիվ մոբիլիզացում ու ինտենսիվ օգտագործում: Ընդ որում, աշխատանքները պետք է վարվեն համալիր կարգով, բոլոր հիմնական ուղղություններով համատեղ: Այս նպատակի համար առաջին հերթին պետք է մշակվի ՀՀ մարզերի ագրարային ոլորտի զարգացման նպատակային համալիր հայեցակարգը, որի հիմնական ուղղությունները կարելի է համարել՝

1. Միջոցառումներ, ուղղված գյուղատնտեսական արտադրության ըստ ամենայնի կոոպերացմանը, խոշորացմանը և ապրանքային արտադրության ձևավորմանը:
2. Մարզերի գյուղատնտեսության զարգացմանը նպաստող առաջնահերթ և հեռահար ինվեստիցիոն միջոցառումներ և անհրաժեշտ միջոցների աղբյուրներ, կոոպերատիվների ու միավորումների սեփական կուտակումներ, փոխառային, հատուկ ծրագրերի, պետական ինվեստիցիաների և այլ միջոցներ:
3. Արտադրության ռացիոնալ վարման տարրերի ողջ համակարգի (ըստ ճյուղերի) մշակումը, նպաստելով արտադրության արդյունքների և արդյունավետության հետևողական ու հիմնավորված աճի գործընթացին:
4. Գյուղատնտեսական արտադրության ենթակառուցվածքների համակարգի զարգացումը:
5. Գյուղի և գյուղական բնակչության սոցիալական զարգացման և ապահովման միջոցառումները:

Գյուղատնտեսության գիտատեխնիկական առաջընթացը ՀՀ մարզերում կարելի է բաժանել երեք փուլի՝

1. արտադրության վարման և արդյունքների մակարդակի վերականգնում,
2. արտադրության մակարդակի կայունացում և հետագա զարգացման նախադրյալների ստեղծում,
3. շուկայական տնտեսության պահանջների համահունչ արտադրության հեռանկարային զարգացման ապահովում:

Ստորև շարադրվում են նկատառումներ՝ագրարային ոլորտում գիտատեխնիկական առաջընթացի դերի վերաբերյալ, որոնք բնականաբար կրում են ընդհանուր բնույթ:

Գիտատեխնիկական առաջընթացը կարող է տեղի ունենալ միայն քաղաքական, սոցիալական ու տնտեսական կայունության և անհրաժեշտ իրավական դաշտի առկայության պայմաններում: Տնտեսական հիմնախնդիրների լուծումը կարող է ապահովել միայն գիտատեխնիկական առաջընթացի հիման վրա: Առանց արտադրության տեխնոլոգիայի, նրա կիրառումն ապահովող տեխնիկայի և արտադրության ձևերի զարգացման, սրանց հետ կապված տնտեսական մեխանիզմների փոփոխման ու կատարելագործման, անհնար է ակնկալել արտադրության առաջընթացը: Այլ կերպ ասած, արտադրության տնտեսական առաջընթացը հիմնված է գիտության և տեխնիկայի զարգացման վրա: Տեխնիկայի զարգացումն էլ, իր հերթին, պայմանավորված է ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտության զարգացումով:

Հայաստանի Հանրապետությունում, ուր խնդիր է դարված շուկայական տնտեսության ձևավորումն ու զարգացումը, գիտատեխնիկական առաջընթացը գյուղատնտեսության ոլորտում պետք է ապահովի աշխատանքի արտադրողականության կտրուկ աճ, գյուղատնտեսական արտադրության ըստ ամենայնի ինտենսիվ

զարգացում, ներքին և արտաքին շուկային միտված արտադրանքի զանգվածի ու տեսականու աճ: Սա նոր հասարակարգի հաջողությունների անհրաժեշտ պայմանն է:

Հայաստանի Հանրապետությունում իրականացված արմատական բարեփոխումներին զուգընթաց, տեղի է ունենում սոցիալական նոր հասարակարգի ձևավորման գործընթաց:

Այդ բարեփոխումները, ինչպես հայտնի է, առավել արմատական ցայտուն են ագրարային ոլորտում: Այստեղ ստեղծվել է տնտեսական ու սոցիալական նոր իրավիճակ: Այս հանգամանքը արտադրության գիտատեխնիկական առաջընթացի բնագավառում առաջ է քաշում նոր, մինչ այդ չկիրառված և այդ կապակցությամբ խորը հիմնախնդիրներ, որոնք սակայն պահանջում են շուտափույթ լուծում:

Այդ խնդիրները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի, որոնցից մեկը՝ կապված է արտադրության կազմակերպման նոր պայմանների, իսկ մյուսը՝ գիտության և տեխնիկայի զարգացման հետ:

Արտադրության ներկայումս դրսևորված փոքր չափորի համար անհրաժեշտ է մշակել գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակների ու սորտերի շրջայնացում և տեղաբաշխում, դրանց տեխնոլոգիաների ճշտում, համապատասխան տեխնիկայի ընտրում կամ այդպիսիների մշակման պատվերների ձևավորում, արտադրության տեղաբաշխում և մասնագիտացում:

Խիստ անհրաժեշտ է նորովի վերականգնել սերմնաբուծության և բույսերի պաշտպանության համակարգերը: Այս բոլորը վերաբերվում է նաև անասնաբուծության ճյուղերին: Անհրաժեշտ է մշակել և կիրառել փոքրաքանակ ֆերմաներում անասունների խնամքի և կերակրման տեխնոլոգիաները, ցեղի բարելավման գործընթացը, պրոֆիլակտիկ անասնաբուժական միջոցառումների կատարման կարգը և պայմանները: Առանձնահատուկ խնդիր է՝ կերային բազայի ժամանակակից հիմունքներով կազմակերպելու հիմնախնդիրը:

Խնդիրներ կան նոր պայմաններում բուն գիտության զարգացման և «գիտություն-արտադրություն» կապի արմատական ամրապնդման հետ: Ինչպե՞ս պետք է ձևավորվի գիտական հաստատությունների թեմատիկան, ի՞նչ աղբյուրներից պետք է ֆինանսավորվի նրա մշակումը, ինչպե՞ս պետք է գնահատվի գիտնականի աշխատանքը և ինչպե՞ս պետք է ընթանա գիտական ձեռքբերումների օգտագործումը արտադրության ոլորտում: Այս հարցերը սպասում են իրենց առաջնահերթ լուծմանը:

Առաջին քայլերն են արվում գիտատեխնիկական արտադրանքի շուկայի ձևավորման ուղղությամբ: Սակայն, այս խնդրում կան դեռևս շատ խոչընդոտներ և չլուծված խնդիրներ:

Գիտնականի աշխատանքը դարձել է չերևացող, գիտական հիմնարկների անձնակազմը արագորեն ծերանում է:

Գիտատեխնիկական առաջընթացի ապահովման գործընթացում վճռորոշ է նաև նոր մտածելակերպի տիրապետող մարդկանց՝ մասնագետների դերը: Այս կապակցությամբ արմատական բարեփոխումների է ենթարկվել հանրապետության մասնագիտական միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգը: Վերանվանվել և անհրաժեշտ փոփոխությունների են ենթարկվել ուսումնական ծրագրերը, դրանց ծավալներն ու ուսուցման մեթոդները: Ուսումնական ծրագրերում բոլոր մասնագիտությունների գծով, մեծ տեղ է հատկացվում շուկայական էկոնոմիկայի տարրերին՝ մարքեթինգ, կազմակերպում (մենեջմենթ), համակարգչային տեխնիկայի տիրապետում, մրցակցության կարգավորում և այլն:

ՀՀ մարզերում տեղաբաշխված են գյուղատնտեսության ոլորտի առանձին գիտական հաստատություններ և գիտափորձարարական օբյեկտներ: Այս օբյեկտները ընդհանուր առմամբ ներկայացնում են զգալի գիտատեխնիկական մարմիններին, համայնքներին ու տնտեսավարներին՝ մարզերի գյուղատնտեսության գիտատեխնիկական առաջընթացն ապահովելու, վերջինիս զարգացման գործում դրական բեկում առաջացնելու գործում:

Բոլոր զարգացած երկրներում, առանց բացառության, պետությունը, նպատակ ունենալով նպաստել գիտատեխնիկական առաջընթացին, ակտիվ միջամտություն է ցուցաբերում արտադրական հարաբերություններն արտադրողական ուժերի զարգացման մակարդակին հարմարեցնելու բարդ և պատասխանատու գործընթացին:

Այդ նպատակի համար գործի են դրվում պետության բոլոր հնարավորությունները, մասնավորապես՝ ֆինանսավորման մեխանիզմը, հարկային համակարգը, արտոնագրային քաղաքականությունը և այլ լծակներ, որոնք ոչ միայն օժանդակում են գիտատեխնիկական առաջընթացի հետ կապված աշխատանքների կատարմանը, այլ նաև կատարում են կարգավորման ու վերահսկման պարտականություններ՝ առավել նպատակային դարձնելով գիտատեխնիկական առաջընթացի հետ կապված ծախսումները:

Զարգացած երկրներում գիտական սպասարկումը կարգավորող գործոններն ազդում են որոշակի տնտեսական մեխանիզմների միջոցով, որոնց գլխավոր տարրերն են շուկան, մենաշնորհը և մրցակցությունը:

Նման դեպքում պետական մենաշնորհային կարգավորման մեխանիզմի շրջանակներում իրագործվող գիտատեխնիկական առաջընթացը հենվում է կոնկրետ ֆերմերների գործունեության վրա՝ ստեղծելով, ըստ էության, գիտաարտադրական մի միասնական համալիր, որում գիտահետազոտական գործունեությունն անբաժանելի է արտադրությունից, հետևապես և կապիտալի կուտակման գործընթացներից:

Դա է հիմնականում պատճառը, որ գիտական սպասարկման բարձր մակարդակը վերջին հաշվով, հանդես է գալիս որպես կոնկրետ արդյունքների ստացման երաշխիք:

Շուկայական տնտեսության պայմաններում գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների կենտրոնացված սատարման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ մի կողմից շուկայական հարաբերություններում գործող կարգավորիչ լծակներն այլևս պահանջված մակարդակով չեն ապահովում գիտական սպասարկման առևտրային (կոմերցիոն) շահութաբերությունը, մյուս կողմից՝ առանձին ֆիրմաների պաշարները (նյութական, ֆինանսական) թույլ չեն տալիս բարձր արդյունավետությամբ կազմակերպել խոշորածավալ միջոցառումներ:

Զարգացած երկրներում, չնայած գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների կազմակերպման ու կարգավորման մեջ եղած էական տարբերություններին (օրինակ՝ ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև), այնուհանդերձ, գոյություն ունեն շատ ընդհանուր կողմեր, որոնք հաստատագրված են մի շարք ուղղություններում և տվյալ երկրի կառավարության կողմից ընդունված որոշումներում:

Նշենք այդ ուղղություններից հիմնականները.

- առավել կարևորագույն ու առաջնային գիտահետազոտական աշխատանքների որոնումը և պետական միջոցների նպատակամղումն այդ ուղղությամբ: Գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների խթանումը, ներդրման աշխատանքի կազմակերպումը, ինչպես նաև ստացված արդյունքների տարածումը՝ որպես կարևորագույն և առաջնային խնդիր.
- առավել խոշորածավալ գիտահետազոտական աշխատանքների կատարմանն ուղղված միջոցների ձևավորումը, համակենտրոնացումը, ծախսերի կարգավորումը և վերահսկումը.
- մասնավոր հատվածում սեփական գիտահետազոտական (այդ թվում՝ հիմնարար բնույթ ունեցող) աշխատանքների խրախուսումը.
- գիտական ենթակառուցվածքների արդյունավետ գործունեության ապահովումը:

Հայաստանում, անցումային այս ժամանակաշրջանում, կարևոր է ուժեղացնել գիտական հետազոտությունների և մշակումների ուղղությունների ընտրասերուցքային սկզբունքը: Այս հարցում սկզբունքորեն առավել կարևոր է երկարատև և կարճատև շարժառիթների հստակ ճշգրտումը և նպատակաուղղված զարգացումը, ինչպես նաև գիտական հետազոտությունների առաջնության չափանիշների հիմնավորված ընտրությունը:

Նախ, պետք է հրաժարվել անհեռանկարային գիտական մշակումներից, և որպես այդ ուղղությամբ կատարվող գործնական քայլ՝ պարզապես դրանք չֆինանսավորել բյուջեյի հաշվին: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ շատ գիտահետազոտական աշխատանքներ կարող են որակավորվել որպես անհեռանկարային ոչ թե բացարձակ իմաստով, այլ միայն այն պարզ պատճառով, որ տվյալ ժամանակահատվածում համապատասխան միջոցներ տրամադրելու հնարավորություններ չկան:

Հանրապետությունում գիտությանը տրամադրվող միջոցների նպատակամետ օգտագործման հարցում կարևոր գիտահետազոտական գերակայող աշխատանքներ են համարվում նրանք, որոնք ազգային տնտեսության կամ գյուղատնտեսության այս կամ այն ճյուղի զարգացման համար լայն հեռանկարներ են ապահովում:

Եթե գիտության զարգացման մեջ գերակայության հիմնախնդիրը դիտենք ամենաընդհանուր մեկնաբանմամբ, ապա կարելի է նշել, որ այն ձևավորվում է առաջին հերթին պետության քաղաքական նպատակների ընդհանուր համակարգում, երկրորդ՝ գիտական ուղղությունների զարգացման մեջ և երրորդ՝ զանազան բնագավառներում գիտական հետազոտությունների արդյունքների օգտագործմամբ:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավանդական տեխնոլոգիաները համեմատած արդյունաբերականի հետ, ունեն մի շարք առանձնահատկություններ:

Դրանց թվին առաջին հերթին անհրաժեշտ է դասել մասնաժամանակայնությունը (սեզոնայնությունը), կենդանիների հետ վարվելու մանրամասնությունները, կերարտադրության կազմակերպման հարցը, հատկապես մեր հանրապետության առկա պայմաններում՝ բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ոչ ստանդարտ լինելը, մեծաքանակ թափոնները, անհանդուրժելի շատ կորուստները (այդ թվում նաև՝ պահպանման ժամանակ), կենսամթնոլորտի վրա անբարենպաստ ազդեցությունը, որը հաճախ պատճառ է դառնում տարածքային բնապահպանական ճգնաժամերի ու բնակլիմայական գործոնների ազդեցության բացասական երևույթների առկայության:

Շուկայական տնտեսության պայմաններում գիտական արտադրողական ուժի բարձրացումը, հասարակական արտադրության ինտենսիվացման վրա դրա գործնական ներգործության ուժեղացումը մեծապես կպայմանավորվեն գիտահետազոտական ուսումնասիրությունների և փորձարարական մշակումների բնագավառում կադրային ներուժի զարգացման ռազմավարությամբ, նրանց որակական մակարդակի աճով և արդյունավետ օգտագործմամբ:

Գիտական կապերի կառավարման հիմնախնդիրները բազմաթիվ են ու բազմաբովանդակ և դրանք բոլորն առաջին հերթին պայմանավորված են գիտական կադրերի պատրաստման, որակավորման բարձրացման և վերապատրաստման գործընթացներով, այլ խոսքով՝ գիտակրթական համակարգի զարգացմամբ:

Ժամանակակից տնտեսավարման մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ, որոնք ընդհուպ առնչվում են գիտական և արտադրական օղակների գործունեության բոլոր կողմերի հետ: Այդպիսի փոփոխությունների նյութական հիմքը արտադրողական ուժերի ձևավորման նոր մակարդակն է, որը պահանջում է կիրառել սկզբունքորեն նոր տեխնիկա, տեխնոլոգիաներ, տնտեսական, ֆինանսական նոր կառուցակարգեր (մեխանիզմներ):

Արտադրության գիտական ապահովման գործընթացը, բացի կազմակերպչատնտեսական միջոցառումներից, սերտ կապված է գիտատեխնիկական առաջընթացի հետ, ինչը նորանոր պահանջներ է առաջադրում գիտությանն ու արտադրությանը, որոնցում ամենանշանակալիցը դրանց ենթակառույցների կապն է, «Գիտություն-արտադրություն» կառույցի ձևավորումը, գիտության ինտենսիվացումը:

Ներկայիս «Գիտություն-արտադրություն» անփոխարինելի կառույցը պետք է նպատակաուղղված լինի շատ խնդիրների լուծմանը, և նման կարգավիճակը պարտավորեցնում է լինել գործուն ու, առաջին հերթին, ապահովել հասարակական վերարտադրության գործընթացի միասնությունը:

Այդ միասնական բոլորաշրջանում, անշուշտ, առաջատար դեր պետք է ստանձնի գիտությունը, որը պետք է կազմակերպի հետազոտական աշխատանքներ, տա տեղեկատվություններ, կատարի կանխատեսումներ, և վերջապես, կազմակերպի իր իսկ առաջարկությունների իրականացումը:

Գիտատեխնիկական առաջընթացի ամբողջ գործընթացում գիտությունը հիմնականում սուբյեկտի պարտականություններ է կատարում, և միայն բոլորաշրջանի վերջում, երբ կատարվում է ներդրման աշխատանքներ, նա դառնում է օբյեկտ:

Ավելի պատկերավոր արտահայտած, բոլորաշրջանի բոլոր ժամանակահատվածներում գիտությունը թելադրողի դերում է հանդես գալիս, իսկ արտադրությունն անվերապահորեն կատարում է գիտության պահանջները և, վերջում՝ ներդրման ժամանակահատվածում, արտադրությունը, ստանձնելով սուբյեկտի կարգավիճակ, ուրույն պահանջներ է ներկայացնում գիտությանը: Այս փոխշաղկապված համակարգում գործում է հետադարձ կապի կանոն, այսինքն՝ գիտությունը ձգտում է կատարելագործել արտադրությունը, որն իր հերթին նպաստում է գիտության զարգացմանը:

«Գիտություն-արտադրություն» բոլորաշրջանի վերոհիշյալ մեկնաբանումները տրվում են այն նպատակով, որպեսզի ընդգրկվի բոլորաշրջանի արտահայտման շուկայական ձևը, որն ի տարբերություն պլանային, առաջին հերթին նկատի է ունենում շահագրգիռ կողմերի առանձնահատկությունները:

Անդրադառնալով բազմազան գյուղացիական տնտեսությունների գործունեության ու հետագա զարգացման հարցերին, անհրաժեշտ է նշել, որ շուկայական տնտեսության ձևավորման ընթացքում յուրաքանչյուր տնտեսություն, գործելով գիտական հիմունքներով, անընդհատ պետք է ավելացնի ապրանքային արտադրությունը, որը հանդիսանում է շուկայական հարաբերությունների հիմքը:

ԷԴԳԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործումը պետք է իրականացվի պետության կողմից մշակված ոլորտի զարգացման ռազմավարության ծրագրի ներդրումով, որը կնպաստի ընդերքի շահագործման արդյունավետության բարձրացմանը, և այդ ծրագրի ներդրման շնորհիվ կլուծվեն մի շարք տնտեսական, քաղաքական և հասարակական հիմնախնդիրներ.

1. ընդերքի ռացիոնալ օգտագործում,
2. հանքարդյունահանումից վերջնական արտադրանքի ստացում և կիրառումը տեղական արդյունաբերության մեջ,
3. ոլորտի տեխնիկական, տեխնոլոգիական վերազինում,
4. ընդերքի վերագնահատում,
5. շրջակա միջավայրի պահպանության ապահովում,
6. ընդերքի շահագործման ծավալների սահմանափակում:

Այժմ Հայաստանի Հանրապետությունում ընդերքի ուսումնասիրությունը չի կարող համարվել որպես առանձին տնտեսական փուլ. այն ինքնուստինքյան ներառում է ընդերքի ուսումնասիրություն հետագա շահագործումով ընդհանուր շղթայի մեջ, որը հաճախ ակնկալվում է նաև հանքային հումքի հարստացման և վերամշակման գործընթաց:

Տնտեսության առկա պայմաններում կարևոր է օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզում-արդյունահանում-վերամշակում համակարգի ամբողջականությունն ապահովող պետության ռազմավարության իստակեցումը:

Հանդիսանալով ընդերքի սեփականատեր՝ պետության համար պետք է մեծ նշանակություն ունենա հանքահումքային ռեսուրսների որոնման, հետախուզման, հանքավայրերի գնահատման, շահագործման և վերամշակման գործունեության տրամադրման և դրանց կանոնակարգման իրավական դաշտերի կատարելագործումը:

Օգտակար հանածոների հետախուզման բնագավառը հանդիսանում է ներդրումային ռիսկի առավել անարդյունավետ ոլորտ, որովհետև ուսումնասիրվող տասնյակ հանքաերևակումներից մեկը կարող է ձեռք բերել արդյունաբերական նշանակություն, սակայն ընդերքօգտագործման ոլորտը դիտվում է առավել գրավիչ և մրցակցային:

Համակարգի զարգացման հեռանկարում հաշվի առնելով այն, որ հարուստ հանքավայրերի յուրացումը փոխարինվում է համեմատաբար աղքատ և դժվարամատչելի հանքավայրերի շահագործումով, անհրաժեշտություն է առաջանում երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում հանքավայրերի համալիր գնահատմանը և օգտագործմանն ուղղված միջոցառումների իրականացում: Այս հանգամանքը պետք է ակնկալի ոլորտի կառավարման, օրենսդրական և նորմատիվային հենքի ներդաշնակ զարգացում՝ համապատասխանելով տնտեսության ժամանակակից խնդիրներին: Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման, հետախուզման և օգտագործման տրամադրման օրենսդրական դաշտի բարելավման և դրանց կառավարման միջոցառումները պետք է նպատակաուղղված լինեն օտարերկրյա կապիտալի ներգրավվմանը՝ հաշվի առնելով տնտեսվարող սուբյեկտների և պետության շահերը: Անհրաժեշտ է հստակեցնել ընդերքի հետախուզման և շահագործման ընթացքում պետության մասնակցության ձևը, մասնավորապես մետաղակիր և պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոների շահագործման տրամադրումը իրականացնել «արտադրանքի բաշխման» սկզբունքով: Դա հնարավորություն կստեղծի վերահսկել ոչ միայն պետական սեփականության օգտագործումը, այլ նաև պետությունը կհանդիսանա իր ընդերքի օգտագործման լիիրավ մասնակից՝ հանդիսանալով որպես գործընկեր:

Շուկայական հարաբերությունների զարգացումը պարտադրում է, որպեսզի հանրապետության հանքահումքային ոլորտում ներդրումները ուղղված լինեն ոչ միայն հանքարդյունահանման ծավալների աճով; այլև միևնույն ժամանակ նպատակաուղղված լինեն լեռնամետալուրգիայի վերջնական արտադրանքի ստացմանը՝ լուծելով ոլորտի տեխնիկական վերազինման ներդրումային խնդիրները:

Սակայն տնտեսվարողներին հետաքրքրում է ոչ թե երկրի հանքահումքային ներուժը, այլ հետախուզված և արդեն արդյունահանման համար նախատեսված հանքավայրերը՝ սահմանված որակական և քանակական տվյալներով: Կառավարման համակարգի կարևորագույն խնդիրներից պետք է հանդիսանա ընդերքի ռեսուրսային ներուժի փոխակերպումը և գնահատված պաշարները՝ ապահովելով, որ հանքավայրերում արտահանման ծավալները կարգավորվեն ոչ միայն շուկայի պահանջարկով այլ նաև պետական շահերը պաշտպանող իրավական դրույթներով և ժամանակի պահանջներով: